

Անուշ Ա. Խաչատրյան

**ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ (2018-2019 ԹԹ.)***

Բանալի բառեր - ՁԼՄ, էլեկտրոնային մամուլ, հեղափոխություն, բառապաշար, համացանցի լեզու, իմաստային նորաբանություն, հեղինակային նորակազմություններ, դիպվածային բառեր, բառաբարդում, ածանցում:

Մուտք

Մեր կյանքում տեղի ունեցող ցանկացած փոփոխություն իր անդրադարձումն է գտնում լեզվի ամենագայուն բաղադրիչում՝ բառապաշարում՝ համապատասխան բառի առաջացումով կամ գոյություն ունեցող բառերի իմաստային զարգացումով:

Քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական, մշակութային տեղաշարժերի հետևանքով ստեղծված նոր երևույթներն անվանելու համար ստեղծվում են նոր բառեր, բառակապակցություններ, արտահայտություններ: Այդ փոփոխություններն ավելի արագ են արտացոլվում զանգվածային լրատվամիջոցների լեզվում: Բազմաթիվ բառեր, որոնք կերտվում են մամուլում, աստիճանաբար մերվում են հայոց լեզվի բառային կազմին: Նորակազմ բառերով լի հրապարակումները, ի հակադրություն չեզոք բառաշերտ պարունակող տեղեկատվության, գրավում են ընթերցողին, հետաքրքրություն առաջացնում տվյալ լրատվամիջոցի նկատմամբ, օգնում ընթերցողին ճիշտ ընկալելու արժարժված հիմնական միտքը: Բայց մեր ժամանակների ամենամեծ գրադարանը հենց վիրտուալ աշխարհում է, որտեղ ավելի պահանջված են ոչ թե տպագիր թերթերը, հեռուստատեսային հաղորդումներն ու ռադիոհեռարձակումները, այլ այդ ամենին փոխարինելու եկած էլեկտրոնային, վիրտուալ տեղեկատվական տեխնոլոգիաները¹:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 27.11.2019:

1 Տես **Քալանթարյան Է. Ա.**, էլեկտրոնային և սոցիալական մամուլը պետական կառավարման համակարգում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», Եր., 2017, N 1 (22), էջ 45-53:

Վեբ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) փորձ, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

Արդի հասարակության կախվածությունը տեղեկատվությունից էլեկտրոնային մամուլը դարձրել է համացանցային ոլորտի շարժիչ ուժը, տեղեկատվության ամենապահանջված աղբյուրը: Առցանց տիրույթ է տեղափոխվել նաև հասարակական-քաղաքական պայքարը, որտեղ սոցցանցերն ու էլեկտրոնային մամուլը լուրջ գործիք են դարձել: Դրանցում այսօր տարբեր մեխանիզմներով ստուգվում են հասարակական կարծիքն ու տրամադրությունները, նախապատրաստվում են անգամ հեղափոխությունները:

Հայաստանում 2018 թ. ամբիլյան հեղափոխության հաջողությանը մեծապես նպաստեց համացանցը: Կայանալիք հանրահավաքների, փակվող փողոցների մասին օգտատերերը տեղեկանում էին սոցցանցերից, իսկ էլեկտրոնային մեծաթիվ պարբերականներ առցանց լուսաբանում էին տեղի ունեցող իրադարձությունները: Հեղափոխության ազդեցության ոլորտից չէր կարող դուրս մնալ նաև մամուլի լեզուն: Հայաստանյան քաղաքական գործընթացներն այստեղ նշանավորվեցին բառապաշարային տեղաշարժերով, ստեղծվեցին ինչպես բանային, այնպես էլ իմաստային բազմաթիվ նորաբանություններ:

1. Իմաստային նորաբանություններ

Ժամանակակից ՉԼՍ-ում նոր բառերի գործածությունը պայմանավորված է տեղեկատվության ներգործությունն ուժեղացնելու, խիստ մասնագիտացված հասկացությունները տարբերակելու, կայուն տերմինաբանության միջազգային օգտագործմանը մասնակցելու, լեզվական «նորաձևությունը» հետևելով տեքստին հեղինակություն հաղորդելու միտումներով²:

Լեզվի բառային կազմի համալրումը նոր բառերով տեղի է ունենում երկու ճանապարհով՝ **ներքին** և **արտաքին**: Բառապաշարի հարստացման ներքին ճանապարհը տվյալ լեզվի հնարավորություններով, բառակազմական սեփական օրինաչափություններով նոր բառերի կերտումն է, իսկ արտաքին ճանապարհը լեզվի բառային կազմի համալրումն է այլ լեզուներից կատարվող փոխառություններով:

Նորաբանությունների մասին խոսելիս հարկ է առաջնորդվել պատմական մոտեցմամբ. բառը նորաբանություն կարող է համարվել միայն լեզվի զարգացման որոշակի փուլում: Համագործածական դառնալով՝ երբեմնի նորակազմ բառը կորցնում է թարմության երանգը և դադարում նորաբանություն լինելուց, այլևս անսովոր չհամարվելով՝ այն մտնում է լեզվի գործուն բառապաշար ու ընդհանրանում: Ներկա ուսումնասիրության դեպքում այդ փուլը 2018-2019 թթ. ժամանակահատվածն է:

2 Տե՛ս Скорородова Е. Ю., Щеголева М. М., Роль и употребление неологизмов в современных сми, «Актуальные проблемы гуманитарных и естественных наук», М., Российский государственный социальный университет, 2016, N 3-5, էջ 73-78:

Մեր ուսումնասիրած ժամանակահատվածում էլեկտրոնային մամուլի էջերում հաճախ հանդիպող իմաստային նորաբանությունները բաղադրված են **քայլ** և **թավիշ** բառերով՝ աղերսվելով հայտնի քաղաքական ուժի և հեղափոխության հետ: Ի սկզբանե նշենք, որ լեզվական այս միավորները տեղ են գտնում հիմնականում ընդդիմադիր մամուլի քննադատական խոսքում: Նորակազմ բառերով այսօր հարուստ է նաև տպագիր մամուլը, սակայն սոցցանցերի ազդեցությամբ էլեկտրոնային մամուլում դրանք ավելի հաճախ են կազմվում ու տարածվում:

Այսպես, **քայլել** «ոտքով գնալ» բայն ու դրա անդեմ ձևերը բառիմաստի ներդասմամբ 2018 թ. հայտնի իրադարձություններից հետո ստացան իմաստային այլ նրբերանգ. **քայլած** սկսեցին բնորոշվել Սերժ Սարգսյանի երրորդ պաշտոնավարման դեմ պայքարող Նիկոլ Փաշինյանի՝ Գյումրիից դեպի Երևան իրականացրած քայլարշավի մասնակիցները: Բնագրային օրինակներ. «Ինչպես անել, որ բոլոր բարձր պաշտոնները հասանելի դառնան **քայլածներին**» (hraparak.am, 20.11.2019), «Այսինքն, մեր երկրում Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք իրավական ապահովության երաշխիքներ պետք է ունենան միայն **«քայլած»** իշխանության ներկայացուցիչները» (irates.am, 14.06.2019), «**Քայլողներն** օրենքի ուժով, հարկատուների հաշվին կաշառք են առաջարկում «հանցագործ» դատավորներին» (tert.am, 11.12.2019):

Նույն կերպ **թավշյա** «խիտ, նուրբ ու փափուկ խավով պատված երեսով կտորից, ոչ բռնի, նուրբ, շատ նուրբ, փափուկ, քնքուշ»³ ածականը, որը նոր բնորոշիչ է հեղափոխությունների պատմության մեջ, հայաստանյան դեպքերից հետո ընդդիմադիր մամուլում սկսեց գործածվել ընդգծված հեզմական երանգով ակնարկելով երևույթի իբրև թե օրինական, ժողովրդահանո գնահատականը, ինչպես՝ **թավշյա խաշ, թավշյա ձևեր, թավշյա ապրելակերպ, թավշյա կարգախոսներ, թավշյա հաղթանակ, թավշյա ասֆալտապատում**: Օրինակներ. «**Թավշյա** թալանը շարունակվում է» (hraparak.am, 30.11.2019), «**Թավշյա** հեղափոխության ոչ **թավշյա** քայլերին սպասելիս» (civilnet.am, 21.10.2019), հեղափոխության մասնակիցները մամուլում որակվեցին **թավշյա**. «**Թավշյա** տղաների ու աղջիկների հռետորաբանության մեջ հարստությունը նույնացվում էր թալանի, կոռուպցիայի, ցոփ ու շվայտ կյանքի, նյութականին գերի դառնալու և հոգևոր սնանկության հետ» (7or.am, 06.05.2019), «**«Թավշյա»** պաշտոնյաների ձեռքբերումները՝ կանանց և ծնողների միջոցներով» (news.am, 04.12.2019): Ավելին՝ **թավիշ** բառը փոխանվանաբար սկսեց կիրառվել հեղափոխության մասնակցի իմաստով. «Այս **թավիշները** չեն անի որևէ բան, որը կբխի մեր ժողովրդի շահերից» (7or.am, 01.10.2019):

3 <https://bararonline.com/%D5%A9%D5%A1%D5%BE%D5%AB%D5%B7> (մուտք 05.11.2019).

Մամուլի էջերում իմաստային նորաբանությունների ստեղծման հիմքում գերազանցապես ընկած են հասարակության քաղաքական պատկերացումները:

Երբ 2018 թ. սեպտեմբերին ԱՊՀ գազաթափողովին մասնակցելու համար Դուշանբե մեկնած ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերելակում կարճատև տեսակցություն ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ, ընդդիմադիր մամուլը, արցախյան հակամարտությանն առնչվող թեմաներում քննադատելով իշխող ուժի վարած քաղաքականությունը, Ադրբեջանի հետ տարվող դիվանագիտությունը սկսեց որակել **վերելակային**՝ ակնարկելով ազգային հույժ կարևոր հարցերին մակերեսային մոտեցում ցուցաբերելը: Էլեկտրոնային մի շարք պարբերականներ նշված դեպքից հետո սկսեցին կիրառել **վերելակային դիվանագիտություն, վերելակային քաղաքականություն, վերելակային բանակցություններ** բառակապակցությունները, ինչպես. «Մահմանային իրավիճակը խոսում է այն մասին, որ **վերելակային դիվանագիտությունը** ձախողվել է...» (tert.am, 05.10.19), «Հարցը վարչապետին ուղղեք, որովհետև ինքն է այդ **վերելակային բանակցությունները** վարում» (news.am, 09.05.2019):

Բառիմաստի ընդլայնմամբ այլ նշանակություններ են ձեռք բերել **սև ու սպիտակ** գունանունները և դրանցից կազմված բայերը: Երևանի քաղաքապետի պաշտոնին հավակնող Հայկ Մարությանն իր նախընտրական քարոզարշավում ասում էր՝ «Այսօր Հայաստանում իրավիճակը շատ պարզ է՝ կան **սպիտակ** ուժեր, և կան **սև** ուժեր, վերջ» (aysor.am, 03.09.2018)՝ ակնարկելով, որ սպիտակներն իշխող ուժի շարքերում են, իսկ սևերը նրանց չընդունողներն են: Դրանից հետո ընդդիմադիր մամուլը սկսեց այս գունանունները, դրանցով կազմված բարդություններն ու բայերը կիրառել վերաիմաստավորմամբ՝ մատնանշելով կոնկրետ անձանց, ինչպես. «Մրանք վախվորած ու նորահարսի պես կարմրում են ու փորձում ապացուցել, որ **սև** չեն» (7or.am, 14.09.2018), «Փաշինյանը շատ լավ ճանաչում է իր ընտրագանգվածին և դրա համար չի խուսափում **սև-սպիտակային** հռետորաբանությունից...» (7or.am, 14.09.2018), «Նախկինում ավելի **«սևսպիտակային»** դաշտ էր, այսինքն՝ այն, ինչ մերը չէ, լավը չէ, հիմա կարծես թե դա փոխվում է» (168.am, 16.10.2018), «Դրժված խոստումներ, կադրային վատ քաղաքականություն, **«սևուսպիտակի»** բաժանում» (aysor.am, 20.06.2019), «Հետո մեզ դարձրեցին **սևեր**, իրենք եղան **սպիտակներ**, Հայկն այս միտքը դրեց շրջանառության մեջ» (magnis.news, 09.08.2019), «Ինչպես **են սևանում և սպիտակում**. փաշինյանական ձեռնարկ» (7or.am, 17.11.2019):

Էլեկտրոնային հրապարակումների հեղինակները ոճական նկատառումներով նոր շունչ են հաղորդում հնաբանություններին: Այսպես, հայտնի է, որ մատյան գունդը (մատենիկ գունդ) Մասանյան Գարսկաստանի բանակի ընտիր հեծելազորն էր: Մամուլում նշված պատմաբանը կիրառվում է ուժեղագույն զենքի իմաստով, ինչպես. «**Սեդա Սաֆարյանը**... կատարում է **Նիկոլ Փաշինյանի** քարոզական **«մատյան» գնդի** առաջամարտիկի դերը» (7or.am,

44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100

13.06.2019): Իմաստափոխությունն այստեղ պայմանավորված է գործառական զուգորդությամբ:

Մամուլի լեզվում այսօր տարածված է հատուկ անունների հասարակացումը, որի հիմքում ընկած է բառիմաստի ընդլայնումը: Մեր ուսումնասիրած ժամանակահատվածում լեզվական այդ իրողության ամենատարածված օրինակներից են **Պողոս** գոյականը, «Հ վարչապետի անուն-ազգանունը: Այսպես, Հայաստանում Ամուլսարի հանքի շահագործման առնչությամբ գրառում անելով իր Ֆեյսբուքյան էջում, վիճարկելով այդ հարցը հանրաքվեով լուծելու գաղափարը, ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Բաբկեն Թունյանը նշում էր. «Ես չեմ ուզում, որ իմ հարևան անգրագետ **Պողոսը**՝ իր անգրագետ բազմանդամ ընտանիքով, ավելի մեծ դեր խաղա կոնկրետ այս հարցում որոշում կայացնելու գործում, քան ես»: Պատգամավորի այդ գրառումը քննադատության բռնն ալիք բարձրացրեց ընդդիմադիր մամուլում: **Պողոս** գոյականը, ընդլայնելով իր իմաստային դաշտը, սկսեց կիրառվել «շարքային քաղաքացի, ժողովրդի հասարակ ներկայացուցիչ» նշանակությամբ՝ գործածվելով նաև հոգնակի թվով ու գրվելով փոքրատառ: Օրինակներ. «Ժողովուրդ ջան, **պողոսներ**, էլ չփակենք փողոցներ» (arenanews.am, 26.08.2019), «**Պողոսների** քվեով պատգամավոր դարձածը որոշեց իր հարևան «անգրագետ Պողոսին» վատով մատնացույց անել» (live24.am, 23.08.2019), «Անգրագետ **պողոսները** չպետք է որոշեն պետության համար կարևոր հարցերը՝ իբրև մեծամասնություն» (alternativ.am, 02.10.2019), «Փաշինյանն ունի **պողոսների** զանգված, որն ամեն ինչ մարտում է» (5tv.am, 15.11.2019):

Երբ 2019 թ. նոյեմբերին պարզվեց, որ հայտնի գործարարներից մեկը քաղաքապետարանին «ԿամԱզ» մեքենաներ է նվիրել շինթույլտվություն ստանալու դիմաց, ընդդիմադիր մամուլի էջերում սկսեցին շրջանառվել **կամազային գործարք, կամազային կոռուպցիա** կապակցությունները: ««Ժողովուրդ» օրաթերթը բացահայտումներ է արել, որոնք ավելի են խճճում քաղաքային իշխանության **կամազային գործարքների** խճճակարը» (news.am, 03.12.2019):

Իմաստային նոր երանգ է ստացել **հերձում** «կտրում, պատռում, մասնատում» բառը: Մամուլի լեզվում այն սկսել է կիրառվել «բացահայտել» նշանակությամբ, ինչպես. «Ինչքան և ովքեր են կերել՝ հետագայում ցույց կտա քաղաքական **հերձումը**» (hayeli.am, 28.11.2019):

Գունափոխություն բառը սկսել է կիրառվել ինչպես գաղափարական կողմնորոշումը փոխելու, քաղաքական մի թիմից մյուսին անցնելու իմաստով, այնպես էլ սեռական փոքրամասնություններին առնչվող թեմաներում:

Վերը ներկայացված օրինակները մեկ անգամ ևս հավաստում են, որ իմաստային նորաբանություններով մամուլի բառապաշարի թարմացումը չընդհատվող, անվերահսկելի և անխուսափելի գործընթաց է:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Կարի. թիվ 2 (70), ամբի-հունիս, 2020

2. Հեղինակային նորակազմություններ, դիպվածային բառեր

Մամուլի բառապաշարում առանձնահատուկ տեղ ու դեր ունեն **դիպվածային բառերը**, որոնք լրագրողական նյութերն ավելի կենդանի ու պատկերավոր են դարձնում՝ չհաշված այն դեպքերը, երբ հեղինակները ծայրահեղության մեջ են ընկնում, անցնում ընդունելի սահմանն ու մոտենում գոեհիկին: Պատահական չէ, որ ժամանակակից հրապարակումներում բազմիցս խախտվում են էթիկական և իրավական նորմերը՝ հանգեցնելով անգամ դատավարության:

«Դիպվածային բառերը սրում են ասելիքը, բովանդակության առանցքային հարցերի վրա հրավիրում ընթերցողի կամ ունկնդրի ուշադրությունը, արտահայտում են լրագրողի վերաբերմունքը (հեզնական կամ երգիծական)»⁴:

Գրաքննության թուլացման պայմաններում փոխվել է ժամանակակից հասարակության խոսքային պահվածքը. ՉԼՄ-ում վերանում են անցյալի խոսքային կարծրատիպերը, ավելանում են հեզնանքն ու սարկազմը, ինչը բառի մեջ արթնացնում ու զարգացնում է իմաստային այլ նրբերանգներ: Միաժամանակ նկատվում են լեզվի գոեհկացում, տաբու բառերի ուղղակի, կոպիտ իմաստների բացահայտում և խոսքի ոճական անկում⁵:

Եթե լեզվական նորաբանություններն առաջանում են անհրաժեշտաբար, նոր առարկաներ, հասկացություններ, երևույթներ արտահայտելու համար, ապա հեղինակային նորաբանությունները ստեղծվում են առանձին անհատների՝ գրողների, լրագրողների կողմից՝ գեղարվեստական-ոճական նպատակներով, և ունեն արտահայտչական որոշակի դեր: Դեռևս անտիկ շրջանի փիլիսոփաներին ու ճարտասաններին հետաքրքրել է այն հարցը, թե ինչպես պետք է կառուցել ու ներկայացնել հաղորդվող նյութը, որպեսզի այն արդյունավետորեն ընկալվի և ներագրի ճիշտ ուղղությամբ:

«Եթե ուզում ես ինձ համոզել, պետք է մտածես իմ մտքերը, զգաս իմ զգացմունքներն ու խոսես իմ խոսքերը»⁶, - ասել է Ցիցերոնը: Ընթերցողական լսարանն ընդլայնելու, մարդկանց կողմնորոշելու, հասարակական գիտակցության վրա ներգործելու նպատակով էլեկտրոնային պարբերականների քննադատական խոսքում հաճախադեպ են հեղինակային և դիպվածային նորակազմությունները: Սրանց վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ կան տարբեր ըմբռնումներ:

4 Ավետիսյան Յու. Ա., Սարգսյան Ա. Լ. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 381:

5 Տե՛ս Анисимова Л. А., Лексические особенности языка современной российской качественной и массовой прессы. Неологизмы, часть автореферата, М., 2010:

6 Մ. Դ. Цицерон, Три трактата об ораторском искусстве, М., 1972, տե՛ս նաև Արևշատյան Ա., Հռետորական արվեստի հիմունքները, Եր., 1961:

Էդ. Աղայանը բոլոր նորաբանությունները, ըստ բառապաշարում ունեցած դերի, բաժանում է երկու խմբի՝ ընդհանրացող և մեկուսացած: Ընդհանրացող է անվանում այն նոր բառերը, որոնք, կարճատև թե երկարատև ժամանակամիջոցում անընդհատ կրկնողաբար գործածվելով, անցնում են բառապաշարի գործուն շերտ և հենց դրա հետևանքով էլ դադարում նորաբանություն լինելուց (տիեզերանավ, տիեզերագնաց, գեղասահք և այլն), իսկ մեկուսացած՝ այն նորաբանությունները, որոնք գործածվում են այս կամ այն գրվածքում, բայց կրկնվող գործածություններ չեն ունենում, հետևաբար և չեն ընդհանրանում ու չեն անցնում բառապաշարի գործուն շերտ: Դրանք դիպվածային բառերն ու հեղինակային նորաբանություններն են, նաև անհարկի փոխառությունները⁷:

Խոսելով անհատական-ոճական նորաբանությունների մասին՝ Ս. Էդոյանը նպատակահարմար է գտնում դրանք պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ դիպվածական և հեղինակային՝ ընդգծելով, որ երկուսն էլ շեղվում են լեզվի բառակազմական ավանդական օրինաչափություններից⁸:

Ա. Մարությանը, խստորեն սահմանազատելով դիպվածային բառերն ու հեղինակային նորակազմությունները, նկատում է, որ դիպվածային բառերին առավել բնորոշ են բառակազմական շեղումներն ու անկանոնությունները, բառակազմական կաղապարների հաճախակի միտումնավոր խախտումները: Հեղինակային նորաբանությունները, ըստ նրա, հիմնականում կանոնական կազմություններ են⁹:

Նշված լեզվական միավորները քննել է նաև Թ. Ղարազյուլյանը: Նա դիպվածային բառերը բաժանում է երկու խմբի: Առաջին խմբում ընդգրկում է այն բառերը, որոնք իրենց կազմությամբ համապատասխանում են հայերենի բառակազմական կաղապարներին, սակայն սովորական բառերից տարբերվում են բաղադրիչների անսովոր համադրությամբ, իսկ երկրորդ խմբում՝ նրանք, որոնք կազմվում են հայերենի բառակազմական կաղապարներին չհամապատասխանող ձևերով¹⁰:

Ինչ խոսք, հեղինակայինի ու դիպվածայինի սահմանը որոշելը երբեմն դյուրին չէ, քանի որ հանդիպում են բառեր, որոնք հավասարապես կարող են համարվել և՛ հեղինակային նորակազմություններ, և՛ դիպվածային բառեր: Այդ են վկայում նաև էլեկտրոնային մամուլից մեր քաղած օրինակները: Լեզվաբանական ընդունված մոտեցմամբ՝ դիպվածային բառերը (ֆր. mot occasionnet, անգլ. occasional word, գերմ. okkasioneles Wort, իսպ. palabra ocasional) ստեղծվում են խոսքի ընթացքում պահի թելադրանքով՝ որևէ իրադարձության կապակցությամբ:

7 Տե՛ս Աղայան Էդ. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 170:
8 Տե՛ս Էդոյան Ս. Ա., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 196:
9 Տե՛ս Մարության Ա. Ա., Նոր բառեր և նորաբանություններ, http://www.yso.am/files/07A_Marutyay-1434460870-.pdf (մուտք՝ 20.09.2019):
10 Տե՛ս Ղարազյուլյան Թ. Ա., Լեզվի և ոճի հարցեր, գիրք 7, Եր., 1983, էջ 205-205:

յամբ. «Դիպլոմատական բառերում առավել շեշտվում է առիթի, պահի, դիպլոմաի և ընդհանրապես իրադրության պահանջով ստեղծված լինելու հանգամանքը, իսկ հեղինակային տեսակի դեպքում՝ պատկերավորության, բանաստեղծական ներշնչանքի գործոնը»¹¹:

Մերօրյա ընդդիմադիր մամուլը, որն ավելի համարձակ ու անկաշկանդ է բառօգտագործման միջոցներ ընտրելիս, հաճախ է դիմում լեզվական այս միավորների կիրառությանը: Այսօր արդի էլեկտրոնային մամուլ է սողոսկել համացանցի լեզուն¹². Բազմաթիվ դիպլոմային բառեր են ստեղծում սոցցանցերի օգտատերերը, որոնց գրառումները շատ պարբերականներ ներառում են իրենց «Կարծիք», «Համացանց», «Սոցցանցեր» բաժիններում:

Ժամանակակից հայերենը պատկանում է բառակազմական անսպառ հնարավորություններ ունեցող լեզուների թվին: Էլեկտրոնային մամուլում դիպլոմային բառեր են կազմվում գրաբարյան շրջանից ժառանգած բառակազմական միջոցներով՝ բառաբարդմամբ ու ածանցմամբ: Քիչ չեն նաև նորակազմ հապավումները:

Բառաբարդումը՝ բառակազմական կաղապարների ու բաղադրական հիմքերի բազմազանությամբ, ածանցների հարստությունը թույլ են տալիս ազատորեն կազմել նորանոր բառեր: Դիպլոմային բառեր են կերտվում գոյականի, ածականի, դերանվան, բայարմատի՝ միմյանց կամ այլ խոսքի մասերի հետ բաղադրմամբ: Տարածված են հատկապես գոյական բաղադրիչով բարդությունները, հանդիպում են «գոյական+գոյական», «ածական+գոյական», «գոյական+բայարմատ», «դերանուն+գոյական» կաղապարներով, նաև մակբայով և մեկ այլ խոսքի մասով ստեղծված նորակազմություններ:

Երիտասարդ չսափրված պատգամավորների անփորձությունը հեզնելու համար ընդդիմադիր մամուլում շրջանառվում է **թրաշամանուկ** բառը (**հրաշամանուկ** բառի համաբանությամբ). ««Թ-ավլյա» հեղափոխության միջոցով իշխանության եկան **թրաշամանուկները**» (7or.am, 30.05.2019): Այն հանդիպում է նաև որոշային կիրառությամբ, ինչպես՝ **թրաշամանուկ կառավարություն** (iravunk.com, 17.04.2019), **թրաշամանուկ պաշտոնյա** (hraparak.am, 15.06.2019):

Հեղափոխությանը սերտանձամերին մամուլը տվեց **թավշակրոն** որակումը. «**Թավշակրոն** իշխանություն. կրոնական մոլեռանդության բաղադրիչ» (iravunk.com, 13.07.2018), «Սդրոսածին չէ... Հետևաբար **թավշակրոն** թրաշամանուկների աչքի գրողն է» (yerevan.today, 31.10.2018):

Մամուլում գործում է տեղի ու ժամանակի տնտեսման օրենքը. այստեղ նոր բարդություններ կազմվում են ոչ միայն նոր հասկացություններ ար-

11 **Էդյան Ս. Ա.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002, էջ 6:

12 Համացանցի լեզվի մասին ավելի մանրամասն տե՛ս **Քամայան Ա. Ս.**, Համացանցային հաղորդակցման լեզվի բառապաշարի առանձնահատկությունները, Գր. Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին նվիրված առցանց գիտաժողով, 2017, էջ 389-409:

տահայտելու պահանջով, այլև երկու կամ ավելի իմաստներ մեկ բառով արտահայտելու անհրաժեշտությամբ, ինչը հաղորդակցման առավել արտահայտիչ միջոց է: Այսպես, այսինչ ուժին կամ անձին մոտ կանգնածներին բնութագրելիս լրագրողներն օգտագործում են **մերձ** արմատով բարդություններ, ինչպես՝ **մերձիմքայական** (news.am, 21.05.2019), **քայլարածամերձ** (7or.am, 13.05.2019), **նիկոլամերձ** (irates.am, 04.03.2019): Նույն կերպ որևէ ուժին սաստարող, նրան կողմ շրջանակները բնութագրվում են **մետ** արմատով կազմված բարդություններով, ինչպես՝ **քոչարյանամետ, նիկոլամետ, սերժամետ**: Նույն իմաստով հանդիպել ենք **իրենցքայական** (news.am, 26.09.2019) դիպվածային կազմությանը: Կամ՝ 2018 թ. հեղափոխությանը նախորդած ժամանակահատվածի համար գործածվում էր **մինչթավշյա** (7or.am, 14.03.2019) կազմությունը: Ինչ խոսք, մեր ուսումնասիրած ժամանակահատվածում բարդություններում ակտիվ արմատներ են **քայլ-ը, թավիշ-ը, Նիկոլ, Սորոս** և **Պողոս** հատուկ անունները: **Պողոսապետություն** (mamul.am, 04.10.2019), **նիկոլապետություն** (aravot.am, 17.09.2019), **քայլիշխանություն** (hayeli.am, 23.08.2019), **քայլատուն** (hraparak.am, 25.04.2019) բառերն անհատական ճաշակի արդյունք են և իրենց անսովորությամբ հակադրվում են ընդհանուր գործածություն ունեցող բառերին:

Բազմաթիվ նոր բառեր են կազմվել Սորոս գոյականով: Ամերիկացի մեծահարուստ, քաղաքական ակտիվիստ Ջորջ Սորոսը Հայաստանում շատերի կողմից ասոցացվում է պետության թշնամու կերպարի հետ. նրան մեղադրում են հետխորհրդային տարածքում «գունավոր հեղափոխություններ» ֆինանսավորելու, դրամաշնորհների դիմաց ավանդական արժեքների խարխլում, անհարկի ազատամտություն, ընտանիքի դերակատարության նսեմացում քարոզելու համար: Սորոսի հիմնադրամի հետ առնչություն ունեցողները շատ արագ բացասական պիտակավորում ստացան, մամուլում կազմվեցին **սորոսամերձ** (168.am, 28.09.2019), **սորոսատուն** (7or.am, 18.02.2019), **սորոսա-ահաբեկչական, Սորոսա-գրանտակեր** (mamul.am, 22.09.2019), **Սորոսա-ահաբեկիչ** (analitik.am, 09.10.2019) դիպվածային կառույցները. վերջին երկու միավորների՝ գծիկով ու մեծատառով գրությունն անհանձնարարելի է:

Դիպվածային բառերը հումորային երանգ են հաղորդում տեքստին, երգիծանքը չի կորչում նաև բնագրից դուրս: Դրանցով հեղինակը մատնացույց է անում երևույթի ամենաէական հատկանիշը¹³: Երբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ ՀՀ-ում քրեական ենթամշակույթի քարոզչությունն ու հեռուստացումը պետք է արմատախիլ արվեն, և ընդդիմացողներին «կլոռեն ասֆալ-

Վէմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Կարի. թիվ 2 (70), ամբի-հունիս, 2020

13 Стів Пауля Ю. Н., Окказионализмы новейшего времени, Диссертации по гуманитарным наукам, Ростов-на-Дону, 2005, <http://cheloveknauka.com/okkazionalizmy-noveyshego-vremeni#ixzz679eQzwnJ> (մուտք՝ 11.10.2019):

տին ու կծեփեն պատերին», մամուլում ստեղծվեցին այդ իմաստն արտահայտող «գոյական+բայանուն» կաղապարով **ասֆալտափռում** և **մարդածեփում** կազմությունները. «Հիմա մնում է ոստիկանությունից ճանապարհային քարտեզ պահանջենք, թե որ փողոցը քանի հոգով կարելի է փակել, որ ասֆալտին ու պատերին **մարդածեփումներ** չլինեն» (irates.am, 04.12.2019), ««**Ասֆալտափռման**» օպերացիա Իսակովի պողոտայում. բերման են ենթարկվել Դերժավայի Արկադիի թիկնագործի անդամները» (pastinfo.am, 04.30.2019):

Որոշակի թիվ են կազմում օտար և սեփական բաղադրիչներով, ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդական ձևույթներով կազմվող բառերը: Նորակազմություններում գործառական ակտիվություն ունի կիսապատճենման բառակազմական եղանակը: Օրինակներ. **-կրատիա** (հուն. kratos «ուժ, իշխանություն»). հայերենում այդ միավորը թարգմանվում է «վարություն») - **լակոտակրատիա** («Մի կողմից սա լավ է, քանզի կարագացնի ՌԴ դեկավարության վերաբերմունքի փոփոխությունը հայրենի **լակոտակրատիայի** նկատմամբ...») (4news.am, 16.08.2019)), **-մանիա** (հուն. mani - «մոլուցք, մոլագարություն, կիրք») - **նիկոլամանիա** («Այս **նիկոլամանիայի** պտուղներից օգտվեք, քաղե՛ք, բայց մի՛ թափահարեք» (168.am, 13.11.2018)), **-ֆոբիա** (հուն. φόβος - «վախ») - **քոչարյանաֆոբիա** («Ինչո՞վ բացատրենք նման **քոչարյանաֆոբիան**» (7or.am, 17.06.2019)):

Էլեկտրոնային մամուլի դիպվածային բառապաշարում հաճախադեպ են «օտար բաղադրիչ + հայերեն ձևույթ» կազմով միավորները, ինչպես՝ **մինիմարգպետարան** (news.am, 28.11.2019), **սուպերնախարար** (tert.am, 18.11.2019), **սուպերխորհրդարանական** (armeniasputnik.am, 21.01.2019), **սուպերվարչապետ** (armenpress.am, 08.05.2019), **սուպերպատգամավոր** (armtimes.com, 07.05.2019), **շեֆակազմ** (168.am, 24.07.2019), **դրամաշնորհակերությունը** գուգահեռ կիրառվում է օտար արմատով **գրանտակերություն** (hrapararak.am, 19.02.2019) բառը, «օտար հիմնական ձևույթներ + հայերեն վերջածանց» կաղապարով ստեղծվել է **նյուզմեյքերություն** (անգլ. newsmaker - «որևէ անձ, որը հաճախակի է ելույթներ ունենում տարբեր լրատվամիջոցներում») բառը (7or.am. 28.05.2019):

«Ֆեյսբուք» սոցցանցի ուղիղթերային գործառույթից (անգլ. live - «կենդանի, ուղիղ միացում») հաճախակի օգտվող պաշտոնյաներին մամուլը տվեց **լայվասեր** բնորոշումը. «**Լայվասեր** իշխանություններն իրենց հյուրերին անպայման տանում են Հյուսիսային պողոտա...» (politik.am, 17.06.2019):

Թվարկված օրինակների մի մասն ունի եզակի կիրառություն, բնորոշ է կոնկրետ լրատվամիջոցի: Մամուլում քիչ չեն նաև անճաշակ կազմությունները, ինչպես՝ **վուվուզելաչամպայնային ամբոխ**, **սեռժառոբական**, **թավշիկուսներ**, **դըմփամփոններ**, **գըմփ-գըմփ-հուական**, **վարչափեղ**: Նշված ժամակամիջոցում մամուլում ստեղծված որոշ բառեր էլ ընդհանրաճանաչ միտում ունեն: Իհարկե, այստեղ վճռական դերը պատկանում է հասարակությանը, մասնավորապես գրողներին, մամուլի աշխատողներին, գիտնականներին, պետական այն

մարմիններին, որոնք կոչված են հսկելու և ճիշտ հունի մեջ դնելու լեզվի զարգացման ընթացքը: Վերջիններիս որոշմամբ միայն պետք է քաղաքացիություն ստանա ամեն մի նորակերտում:

Ինչպես գրաբարում, այնպես էլ այսօր վերջածանցավոր կաղապարները զգալիորեն գերակշռում են նախածանցավորներին¹⁴: Մեր դիտարկած պարբերականներում դիպվածային բառերի կազմության մեջ կենսունակ վերջածանցներից են փոխառյալ **-խստ-ը** և **-իզմ-ը**:

Երբ լեզուն փոխառում է միևնույն ածանցն ունեցող մի շարք բառեր, այդ ածանցն աստիճանաբար այնքան է հարազատանում նոր լեզվի համար, որ սկսում է նմանակության շնորհիվ տարածվել և ընդգրկել մի շարք այլ կազմություններ¹⁵: Այդ կերպ հնդեվրոպական լեզուներում կենսունակ **-խստ** ածանցը հայերենին է անցել մի շարք փոխառյալ բառերի կազմում (անարխիստ, իդեալիստ, աթեիստ, մատերիալիստ): Այն աստիճանաբար անջատվել է փոխառյալ բառերից և հայերենում բառակազմական ածանցի ինքնուրույնություն ստացել:

Ընդդիմադիր մամուլի քաղաքական բառապաշարում լայնորեն շրջանառվում են նշված վերջածանցով և՛ մեկ, և՛ մեկից ավելի հիմնական ձևույթներով դիպվածաբանությունները՝ որևէ անձի, գաղափարի հետևորդի, որևէ հասկանիշի կրողի, որևէ բանով տարվածի իմաստներով, ինչպես՝ **-խստ** – **թավշխստ** (analitik.am, 11.08.2019), **քայլխստ** (panorama.am, 26.10.2019), **փաշխստ** (168.am, 04.12.2018), **պայքարիստ** (hayeli.am, 09.08.2018), օտար արմատով **սելֆիստ** (անգլ. selfie - «ինքնալուսանկար»․ սկսեց կիրառվել դեռ 2010-ականներից՝ անդրդիդ հեռախոսներում լուսանկարչական գործառույթների արագ զարգացման շնորհիվ): Կեղծ լուրեր տեղադրողներն ու տարածողները սկսեցին բնութագրվել **ֆեյքնյուզիստ** բարդածանցավոր բառով (անգլ. fake - «կեղծ», news - «տեղեկատվություն»), իսկ 2008 թ. մարտի 1-ի գործով տարվածների համար ընդդիմադիր պարբերականներից մեկում ստեղծվեց **մարտիմեկիստներ** դիպվածաբանությունը («**«Մարտիմեկիստներ»** բազմամյա սուտը հերքվեց» (7or.am, 25.04.2019)):

Ռուսերենի միջոցով հայերենին բազմաթիվ բառեր են անցել նաև հնդեվրոպական լեզուներում տարածված **-իզմ** ածանցով: Որևէ գործի, որևէ ուղղության և վարքագծի պատկանելու խտացված իմաստով այս վերջածանցը գոյականներից ու ածականներից դիպվածային բառեր կազմելու կենսունակություն է հանդես բերում արդի մամուլում, ինչպես՝ **նիկոլիզմ** (yerevan.today, 01.12.2018), **քոչարյանիզմ** (news.am, 07.06.2018), **փաշիզմ** (iravunk.com, 04.12.2018), **լակոտիզմ** (7or.am, 26.05.2019), **սուտիզմ** (politeconomy.org, 17.06.2019), **դատարկիզմ** (zham.am, 17.06.2019), **թավշիզմ** (hraparak.am, 28.12.2018):

14 Տե՛ս **Մարտիրոսյան Ա. Ռ.**, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Եր., 2007, էջ 52:

15 Տե՛ս **Էդյան Ս. Ա.**, Ժամանակակից հայերենի ածանցների առաջացման ուղիների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1959, N 4, էջ 46-68:

Երբ իշխող ուժը հայտարարեց, որ որևէ «իզմի» չի հետևելու, -իզմ վերջա-
ժանցը սկսեց կիրառվել նաև ինքնուրույնաբար, իբրև յուրատեսակ արմատ. «-
Հեղափոխության օրերին, դրանից հետո էլ Փաշինյանը քանիցս հայտարարել է,
որ ինքը «**իզմեր**» չունի, որևէ գաղափարախոսության չի հարում...» (aravot.am,
27.10.2018): Ուշագրավ է հետևյալ օրինակը. ««**Իզմային**» այդ դատարկություն-
նը, սակայն, վաղ թե ուշ պետք է լցվեր ու լցվում է» (7or.am, 06.12.2019). «վերջա-
ժանց + վերջաժանց» կաղապարի միշտ չէ, որ հանդիպում ենք:

Բերենք անվանակերտ այլ վերջաժանցներով օրինակներ՝ պարզաժանցավոր
և բարդաժանցավոր, նաև օտար հիմքերով. մակբայակերտ ածանցներով -աբար
- **վենդետտայարար** (իտալ. vendetta - «վրեժ, սպանված հարազատի փոխարեն
արյան վրեժ») (7or.am, 11.05.2019), -(ա)վարի - **նիկոլավարի** (past.am, 08.01.2019),
գոյականակերտ ածանցներով -արան - **ֆեյքարուծարան** (անգլ. fake «կեղծ» բա-
ռից, նշանակում է «կեղծ օգտատերերի ստեղծման վայր») (aysor.am, 23.10.2019), -
չի - **ստատուսչի** (mamul.am, 22.05.2018) (այսպես սկսեցին անվանվել սոցցան-
ցերում հաճախակի գրառումներով ու մեկնաբանություններով աչքի ընկնողները,
«Ֆեյսբուք» սոցցանցի ակտիվ օգտատերերն էլ որակվեցին **ֆեյսբուքչիներ**
(lin.am, 18.06.2019)), -ույթուն - **նիկոլոյթուն** (slaq.am, 05.06.2019), **դանոսչի-
կոյթուն**, **ստուկաչոյթուն**, ածականակերտ ածանցներով -ական - **սորոսա-
կան** (aysor.am, 22.08.2019), -յան -**ամուլսարյան** (Iragir.am, 21.08.2019), **նիկոյան**
(news.am, 08.10.2018), -ոս - **ադրբեջանոս** (armeniasputnik.am, 24.05.2019):

**Մամուլում դիպվածային բառեր են ստեղծվում հարադրական կազ-
մությունները համադրական դարձնելով, ինչպես՝ թավշյահեղափոխական**
(7or.am, 03.04.2019), **քայլարած** (yerevan.today, 15.11.2019), **նորհայաստանյան**
(tert.am, 06.12.19), վանկաբառային արտասովոր հասավմամբ՝ **երիտքայլարած**
(**երիտասարդ քայլարած**) (7or.am, 17.06.2019):

Բերված բառերն աչքի են ընկնում բառակազմական ձևային անսովոր
համադրությամբ, բառակազմական ավանդական օրինաչափություններից շե-
ղումով: «Դիպվածական բառերի անսովորության և արտառոցության հատկա-
նիշը, սակայն, պայմանավորված է ոչ այնքան անկենսունակ կամ քիչ կենսունակ
բառակազմական կաղապարների համաբանությամբ, այլ հիմնականում նորաս-
տեղծ բաղադրյալ բառերի բաղադրիչների անհամադրելիության կամ տվյալ բա-
ռակազմական կաղապարի՝ լեզվում գոյություն չունենալու (արտակաղապարա-
յին լինելու) հանգամանքով»¹⁶:

Այսպես, հաճախ անհրաժեշտ է լինում այս կամ այն հասկացությունն ար-
տահայտել բայական նշանակությամբ, և երևույթն ավելի դիպուկ նկարագրելու
համար նոր բառեր են ստեղծվում -**ել** կենսունակ բայական-բայակերտ ածան-
ցով: Մեր ուսումնասիրած ժամանակահատվածում **թավիշ** գոյականից կազմվել

16 Էրյան Ս. Ա., ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 199:

է **թավշել** բայը («**Թավշել թավշել է**, մի գեներալի կոչում էլ Իվանյանին տվե՛ք» (hayeli.am, 26.08.2019): **-ել-ը**, կրավորական **վ-**ի հետ բաղադրվելով, մամուլի բառապաշարում ակտիվություն է հանդես բերում փոխառյալ բառերից բայեր կազմելու ժամանակ, ինչպես՝ **մեղալվել, վերթինգվել, փիառվել:**

Վերթինգ (անգլ. Vetting) բառն սկսեց շրջանառվել իշխող ուժի կողմից դատական համակարգը բարեփոխելու գործընթաց սկսելու առնչությամբ: Այն շատ երկրներում անցումային արդարադատության գործիք է, որևէ անձի կենսագրական տվյալների ստուգման գործընթաց, ինչը նախորդում է անձին աշխատանք առաջարկելուն, մրցանակ շնորհելուն կամ նրա նկատմամբ որոշում կայացնելուն: Տեղեկություններ հավաքելու հետ ստուգվում են անձանց ակտիվներն ու եկամուտները՝ որոշելու համար դրանց օրինականությունը:

Վերթինգվել, վերթինգի ենթարկվել կառույցների հետ սկսեցին լայնորեն կիրառվել նաև **վերթինգված** (politik.am, 03.06.2019) և **վերթինգվող** (irates.am, 31.05.2019) անդամ ձևերը, **վերթինգային** ածականը («**Վերթինգային**» դրամաշնորհ Եվրոպայից» (news.am, 21.06.2019)): Նշված երևույթին նախորդած ժամանակաշրջանն անվանվեց **նախավերթինգային** (irates.am, 11.06.2019):

Փիառ՝ PR (անգլ. public relations - «հանրային կապեր») հասպավումը Աշոտ Հայրապետյանի «Օտար բառերի բառարան»-ում բացատրվում է «հասարակության մեջ որևէ անձի կամ կազմակերպության վերաբերյալ վերաբերմունքի ձևավորում. սև պիառ (փիառ)՝ բացասական վերաբերմունքի ձևավորում»¹⁷: Մամուլում հանդիպում է նշված հասպավումից կազմված բայը՝ հանրային ուշադրությունն իր վրա սևեռելու, ինքնագովազդվելու իմաստներով, ինչպես. «Արցախում այլևս արգելվում է **«փիառվել»** սահման պահող զինվորի հաշվին» (factor.am, 07.02.2018):

Անշուշտ, լեզվական նշված միավորների կիրառությունը խրախուսելի չէ:

Դիպվածային կազմություններում հանդիպում են ածականներ, որոնց գերադրական աստիճանը ոճական նկատառումներով կազմվում է ոչ թե տվյալ բառի համար սովորական **ամենա-** մասնիկով, այլ **-ագույն** ածանցով, ինչպես՝ **բարիագույն**, երբեմն էլ հարաբերական ածականները ստանում են համեմատության աստիճաններ, ինչպես՝ **ամենաթավշյա** (tert.am, 12.07.2019), **ամենաթավշյա հեղափոխական** (yerevan.today, 14.05.2019):

Մամուլում նոր բառեր են ստեղծվում ազգանվան հնչյունական աղճատումով, ինչպես՝ **Լադիմիր Լադիմիրի** (ՌԴ նախագահ Պուտինի անունն ու հայրանունը՝ Վլադիմիր Վլադիմիրովիչ), երբեմն՝ դրափոխությամբ, ինչպես՝ **ախշատել**՝ հեգնելու որևէ մեկի աշխատելառնը:

¹⁷http://www.nayiri.com/imagEdDictionaryBrowser.jsp?dictionaryId=114&dt=HY_HY&query=%D5%BA%D5%AB%D5%A1%D5%BC (մուտք՝ 10.10.2019).

Հատկանշական է, որ վերը թվարկված դիպվածային բառերը կապված են կոնկրետ իրադարձությունների հետ: Այս նորաբանությունները կարող են միայն մեկնաբանվել գործառնություն ունենալ խոսքային տվյալ միջավայրում, իսկ հետագայում՝ ընդհանրապես դուրս մնալ բառապաշարից: Ժամանակի քննությունը բռնաժողով կազմություններն էլ կարող են անցնել գործուն բառապաշար, ինչպես՝ **նորհայաստանյան, նախավերջինգային:** «Ընդհանրապես, իբրև կանոն, բառերի գոյատևումը պայմանավորված է խոսքի մեջ նրանց կիրառությամբ, ուստի որքան հաճախադեպ են հանդես գալիս նրանք ու լայն ընդգրկում ստանում, այնքան անհրաժեշտ ու հարագատ են թվում՝ դառնալով սովորական գործառնության բառեր, որից հետո դրանց կիրառությունն աստիճանաբար օրինականացվում է»¹⁸:

Այդուհանդերձ, բազմաթիվ նորակազմություններ մերվում են լեզվի բառային կազմին՝ չնայած արհեստական կազմությանը, իմաստային անհստակությանն ու անորոշությանը: Նման երևույթները կանխելու, մեր լեզուն արհեստական ու անհաջող բառակերտումներով չխճողելու համար հարկավոր է լուրջ մոտեցում ցուցաբերել բառաստեղծման հարցերին, բազմակողմանիորեն քննության ենթարկել ամեն մի բառ, որից հետո միայն գործառնության մեջ դնել: «Լեզուն ինքն է ընտրում իր զարգացման բնական ուղին, և ոչ մի ժխտողական կամ ներբողական վերաբերմունք չի կարող փոխել իրերի բնական ընթացքը, ...քանի որ ամենից ճիշտ և արդար դատավորը Նորին մեծություն ժամանակն է»¹⁹:

Լեզվի զարգացման և ոչ մի փուլում բառապաշարի կատարելագործումը՝ իր բոլոր դրսևորումներով, չի կարող դիտվել իբրև ավարտուն գործընթաց. այն, ինչ այսօր նոր է, վաղը կարող է իր դարն ապրած լինել և փոխարինվել ավելի կատարյալով՝ լեզվի զարգացման վաղվա փուլին համապատասխան: Ժամանակակից հայերենի բառապաշարն այս տեսանկյունից հարաշարժ ու հարափոփոխ վիճակ է ներկայացնում:

Եզրակացություններ

Տեղեկատվական մշակույթի սրընթաց զարգացմանը զուգահեռ՝ մամուլի լեզվի անկապտելի մասն են դարձել գրեթե ամեն օր ստեղծվող նորակազմությունները:

Էլեկտրոնային մամուլում հաճախադեպ է իմաստային նորաբանությունների գործառնությունը՝ բառի կիրառումն անցյալում չունեցած իմաստով:

Հեղինակային նորակազմությունների համակարգում իրենց ոճական արժեքով և կիրառական հաճախականությամբ որոշակիորեն տարբերակվում են

18 Օհանյան Հ. Ա., Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982, էջ 19:
19 Սաքապետյան Ռ. Վ., Բառգրքույկ. նոր և նորակազմ բառեր հայերենում, Եր., 2014, էջ 4-6 :

դիպվածային բառերը: Լեզվի բառապաշարում չգտնելով իր միտքը ճշտորեն արտահայտող բառը՝ լրագրողը, ըստ իր լեզվական ճաշակի, կազմում է նոր բառեր, որոնք համատեղում են հուզականությունը, գնահատանքը, ոճական գունազարդումը և նորարարական շունչը, արտացոլում ինչպես ընթացիկ պահի օբյեկտիվ պատկերը, այնպես էլ հեղինակի անհատական սուբյեկտիվ աշխարհընկալումը՝ դարձնելով լրատվական տեքստերն ավելի կենդանի:

Մամուլում բառաստեղծման տարածված եղանակներից է բառաբարդումը՝ հայերենի բառակազմության արդյունավետ և գործուն եղանակներից մեկը: Բառաբարդումը էլեկտրոնային մամուլում կազմված դիպվածային բառերը ստեղծվել են առավելապես բառակազմական համաբանությամբ, որտեղ գերիշխողը հայերենի ներքին բառաստեղծական հնարավորություններն են:

Անուշ Ա. Խաչատրյան - հեղինակ է 4 հոդվածի: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են ժամանակակից հայոց լեզվին, էլեկտրոնային մամուլի լեզվին ու ոճին վերաբերող տարբեր հարցեր:

Էլեկտրոնային հասցե՝ Anushxach@mail.ru

Summary

SEMANTIC AND OCCASIONAL NEOLOGISMS IN THE 2018-2019 ELECTRONIC MEDIA OF ARMENIA

Anush A. Khachatryan

Keywords - Mass media, electronic press, revolution, vocabulary, Internet language, semantic neologism, copyright neologism, occasional words, word complexity, derivative.

Along with the blazing development of the information culture, neologisms have become an integral part of the press language.

The electronic media, where social-political struggle has penetrated, is a powerful propaganda weapon. It is regularly updated with semantic neologisms. In connection with the events in Armenia in 2018-2019, a number of words began to be used with meanings they did not have in the past. These linguistic units, which have ironically pronounced shades, are commonly found in opposition media.

In the system of authorial neologisms, epistemic words are distinctly distinguished by their stylistic value and frequency. Unable to find a word that accurately expresses his mind in the lexicon of the language, the journalist, according

to his linguistic taste, compiles new words that combine emotion, appreciation, stylistic coloring and innovative breath, reflecting both the objective image of the present moment and the subjective self-image of the author. These words make the news texts more alive and, of course, there are also a number of unsuccessful and not recommended structures.

Widespread and effective ways of creating neologisms in the electronic media are word complexation and derivation. Comparative (synthetic) compositions are created containing foreign morphemes, which are formed in accordance with the word-formation rules of the Armenian language.

Резюме

СЕМАНТИЧЕСКИЕ И ОККАЗИОНАЛЬНЫЕ НЕОЛОГИЗМЫ В ЭЛЕКТРОННЫХ СМИ АРМЕНИИ 2018-2019 ГГ.

Ануш А. Хачатрян

Ключевые слова - средства массовой информации, электронная пресса, революция, словарный запас, интернет-язык, семантический неологизм, авторский неологизм, окказиональные слова, словосложение, аффиксация.

Неологизмы стали неотъемлемой частью языка прессы по мере развития информационной культуры. Они создаются почти ежедневно.

Электронные СМИ, в которые проникла общественно-политическая борьба, являются мощным пропагандистским оружием. Они регулярно пополняются семантическими неологизмами. В связи с событиями в Армении в 2018-2019 годах многие слова стали употребляться со значениями, которых не было в прошлом. Эти языковые единицы, которые имеют сатирическую окраску, обычно встречаются в оппозиционных СМИ.

В системе авторских неологизмов окказиональные слова отчетливо различаются по своей стилистической ценности и частоте. Не найдя слово, которое точно выражает то, что он хочет, журналист в соответствии со своим языковым вкусом подбирает новые слова, которые сочетают в себе эмоцию, оценку, стилистическую окраску и инновационное дыхание, отражая как объективные, так и нынешние субъективные образы настоящего момента. Эти слова делают

новостные тексты более живыми; конечно, есть также ряд неудачных и неприемлемых структур.

Распространенными и эффективными средствами создания неологизмов в электронных СМИ являются словосложение и аффиксация. Созданы синтетические композиции, содержащие иностранные морфемы, которые формированы в соответствии со словообразовательными правилами армянского языка.

REFERENCES

1. **Aghayan Ē. B.**, Ĕndhanur yev haykakan bařagitut'yun, Yer., 1984 (**In Armenian**).
2. **Aghayan Ē. B.**, Lezvabanut'yan himunk'ner, Yer., 1987 (**In Armenian**).
3. **Anisimova L. A.**, Leksicheskiye osobennosti jazyka sovremennoj kachestvennoj I massovoj pressy. Neologizmy, Avtoreferat, M., 2010 (**In Russian**).
4. **Avetisyan Yu. S., Sargsyan A. L.** yev urishner, Hayots' lezu yev khosk'i mshakuyt', Yer., 2016 (**In Armenian**).
5. **Ciceron M. T.**, Tri traktata ob oratorskom iskusstve, M., 1972 (**In Russian**).
6. **Ĕloyan S. A.**, Ardi hayereni norabanut'yunneri bařaran, Yer., 2002 (**In Armenian**).
7. **Ĕloyan S. A.**, Zhamanakakits' hayereni atsants'neri ařajats'man ughineri masin, "Patmabanasirakan handes", Yer., 1959, N 4 (**In Armenian**).
8. **Ĕloyan S. A.**, Zhamanakakits' hayereni bařayin vochabanut'yun, Yer., 1989 (**In Armenian**).
9. **Gharagyulyan T. A.**, Dipvatsayin yev potents'yal bařerĔ zhamanakakits' hayereni bařasteghtsman hamakargum, "Lezvi yev vochi harts'er", Yer., 1983, N 7 (**In Armenian**).
10. **K'alant'aryan Ĕ. A.**, Ĕlektronayin yev sots'ialakan mamulĔ petakan kařavarman hamakargum, "Banber Yerevani hamalsarani. Mijazgayin haraberut'yunner, k'aghak'agitut'yun", Yer., 2017, N 1 (22) (**In Armenian**).
11. **K'amalyan A. S.**, Hamats'ants'ayin haghordakts'man lezvi bařapashari ařandznahatkut'yunnerĔ, Gr. Ghap'ants'yani tsndyan 130-amyakin nvirvats gitazhoghov, Yer., 2017 (**In Armenian**).
12. **Martirosyan A. R.**, Ardi hayereni norabanut'yunneri bařakazmakan kaghaparnere, Yer., 2007 (**In Armenian**).
13. **Marut'yan A. A.**, Nor bařer yev norabanut'yunner, http://www.yso.am/files/07A_Marutyan-1434460870-.pdf (**In Armenian**).
14. **Melk'onyan L. A.**, Imastayin norabanut'yunnerĔ zhamanakakits' hayerenum, "Kant'egh", Yer., 2009, N 3 (40) (**In Armenian**).
15. **Pacula Ju. N.**, Okkazionalizmy novejshego vremeni, Dissertacii po gumanitarnym naukam, Rostov-na-Donu, 2005, <http://cheloveknauka.com/okkazionalizmy-noveyshego-vremeni#ixzz679eQzwnJ> (**In Russian**).
16. **Ohanyan H. A.**, Zhamanakakits' hayots' lezvi bařapasharĔ yev nra harstats'man mijots'nerĔ, Yer., 1982 (**In Armenian**).
17. **Sak'apetoyan R. K.**, Bargrk'uyk. nor yev norakazm bařer hayerenum, Yer., 2014 (**In Armenian**).
18. **Skoroxodova Je. Ju., Sh'egoleva M. M.**, Rol' I upotreblenije neologizmov v sovremennyx smi, "Aktual'nyje problemy gumanitarnyx I jestestvennyx nauk", M., RGSU, 2016, N 3-5 (**In Russian**).